ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/151

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.06.2021թ. թիվ 26/26-1/9348-2021 գրությամբ Ա/Ձ Հովիկ Ավագյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Սպիտակի համայնքապետարանի 03.06.2021թ. թիվ 034/21-847 գրության հիման վրա, 10.06.2021թ. թիվ 26/26-1/9348-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Հովիկ Ավագյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Հովիկ Ավագյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Հովիկ Ավագյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Հովիկ Ավագյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/151 ընթացակարգի շրջանակներում 16.06.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Սպիտակի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Սպիտակի համայնքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.06.2021թ. թիվ 034/21-847 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջներով, ներկայացվում է Ա/Ձ Հովիկ Ավագյանի տվյալները՝ համապատասխան հիմքերով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/151 ընթացակարգի շրջանակներում 16.06.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/151 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/151 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Սպիտակի համայնքապետարանի և Ա/Ձ Հովիկ Ավագյանի միջև 27.10.2020թ. կնքվել է թիվ «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/36» ծածկագրով Սպիտակ համայնքի կարիքների համար գեղարվեստի դպրոցի զուգարանի կառուցման աշխատանքների կատարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սպիտակ համայնքի գեղարվեստի դպրոցի զուգարանի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսելու դեպքում կողմերի միջև համաձայնագիր կնքելու օրվանից մինչև 20.12.2020թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. Կողմերի միջև Պայմանագրի շրջանակներում 31.03.2021թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը, որի համաձայն նախատեսվել են ֆինանսական միջոցներ և աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի 31-ը:

3. Սպիտակի համայնքապետարանը Ա/Ձ Հովիկ Ավագյանին ուղղված 26.05.2021թ. թիվ 034/27-807 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Սպիտակ համայնքի և Ա/Ձ Հովիկ Ավագյանի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 27.10.2020թ. կնքված թիվ ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/36 պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սպիտակ համայնքի գեղարվեստի դպրոցի զուգարանի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո պայմանագրի կողմերի միջև

31.03.2021թ. կնքվել է լրացուցիչ համաձայնագիր, որով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի մայիսի 31-ը:

Սպիտակ համայնքը հեռախոսազանգերի միջոցով բազմիցս դիմել է Ընկերությանը՝ աշխատանքները սկսելու համար, սակայն վերջինիս կողմից մինչ օրս ոչ մի միջոց չի ձեռնարկվել աշխատանքները կատարելու ուղղությամբ:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը)»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, Սպիտակ համայնքը միակողմանի լուծում է Ա/Ձ Հովիկ Ավագյանի հետ 27.10.2020 թվականին կնքված ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/36 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները (...)»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 26.05.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.06.2021թ. թիվ 26/26-1/9348-2021 գրությունը, Սպիտակի համայնքապետարանի 03.06.2021թ. թիվ 034/21-847 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ

այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար ***պատասխանատու է մեղքի առկայության դեպքում***, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Սպիտակի համայնքապետարանի և Ա/Ձ Հովիկ Ավագյանի միջև 27.10.2020թ. կնքվել է թիվ «ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/36» ծածկագրով Սպիտակ համայնքի կարիքների համար գեղարվեստի դպրոցի զուգարանի կառուցման աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սպիտակ համայնքի գեղարվեստի դպրոցի զուգարանի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ֆինանսական միջոցներ նախատեսելու դեպքում կողմերի միջև համաձայնագիր կնքելու օրվանից մինչև 20.12.2020թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Կողմերի միջև Պայմանագրի շրջանակներում 31.03.2021թ. կնքվել է N 1 Համաձայնագիրը, որի համաձայն նախատեսվել են ֆինանսական միջոցներ և աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի մայիսի 31-ը:

Սպիտակի համայնքապետարանը, Ա/Ձ Հովիկ Ավագյանին ուղղված 26.05.2021թ. թիվ 034/27-807 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Սպիտակ համայնքի և Ա/Ձ Հովիկ Ավագյանի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 27.10.2020թ. կնքված թիվ ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/36 պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1

Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սպիտակ համայնքի գեղարվեստի դպրոցի զուգարանի կառուցման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո պայմանագրի կողմերի միջև 31.03.2021թ. կնքվել է լրացուցիչ համաձայնագիր, որով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի մայիսի 31-ը:

Սպիտակ համայնքը հեռախոսազանգերի միջոցով բազմիցս դիմել է Ընկերությանը՝ աշխատանքները սկսելու համար, սակայն վերջինիս կողմից մինչ օրս ոչ մի միջոց չի ձեռնարկվել աշխատանքները կատարելու ուղղությամբ:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը)»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, Սպիտակ համայնքը միակողմանի լուծում է Ա/Ձ Հովիկ Ավագյանի հետ 27.10.2020 թվականին կնքված ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-20/36 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները (...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 26.05.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 3.1.4 կետի ա) ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով, ինչպես հետևում է գործում առկա N 1 Համաձայնագրից, աշխատանքների կատարման վերջաժամկետ է սահմանվել 2021 թվականի մայիսի 31-ը:

Գործով չի վիճարկվել այն փաստը, որ 26.05.2021թ. դրությամբ, այսինքն՝ վերջնաժամկետի լրանալուց 5 օր առաջ, Ա/Ձ Հովիկ Ավագյանի կողմից աշխատանքները դեռևս սկսված չեն եղել:

Նման պայմաններում գտնում եմ, որ Պատվիրատուի մոտ ծագել է կողմերի միջև կնքված Պայմանագրի 3.1.4 կետի ա) ենթակետի հիմքով Պայմանագիրը միակողմանի լուծելու Պատվիրատուի իրավունքը, որն էլ 26.05.2021թ. Պատվիրատուն իրացրել է:

Այսպիսով՝ ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ արձանագրում եմ, որ Ա/Ձ Հովիկ Ավագյանը թույլ է տվել Պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտում, ինչն էլ հիմք է հանդիսանում Ընկերությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մաս 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.06.2021թ. թիվ 26/26-1/9348-2021 գրությամբ Ա/Ձ Հովիկ Ավագյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Հովիկ Ավագյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ

գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**